

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-6

ՅՈՒՆՈՒԱՐ-ՅՈՒՆԻՍ

ՁԶ. ՏԱՐԻ 1942

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ս ՈՒՐ Գ Ի Ք Ի Մ Է Ջ

(Շարունակություն):

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Մ Ի Ն Ն Ի

§ 1. Մ Ի Ն Ն Ի Հ Ա Ր Յ Ը Մ Ե Կ Ն Ի Զ Ն Ե Ր ՈՒ Ն Ի Ք Ո Վ

Բարեխոսի զէմ աստուածային դատա-  
վճիւրը գործադրելու համար Երեմիա, ՄԱ.,  
27 (Եօթան., XXVIII, 27) հրաւեր կը կար-  
գայ բացի Արարատէն նաեւ Միննիին եւ Աս-  
քանաղին: Այս տեղիքին երրայեցերէն բնա-  
պիւրն է՝ *mamlakôth arârât, minni wôaşkenaz*.  
Միննի անունը կը պահուի երեսուքապէս  
Եօթանասնից թարգմանութեան մէջ. *βασί-  
λεις ἄρατε<sup>1</sup> παρ' ἐμοῦ, καὶ τοῖς Ἀσχαναζέσις*,  
ինչպէս բնականաբար հայերէնի մէջ ալ.  
«Պատուէր տուք յիմէն (παρ' ἐμοῦ) այրա-  
րատեան<sup>2</sup> թարգմանութեան եւ ասքանաղեան  
զնդին»: Կ'ըսենք երեսութապէս, որովհետեւ  
Եօթանասնից թարգմանութիւնն ալ ունեցած  
է իր առջեւ Միննի անունը, բայց զայն  
հասկցած է ոչ թէ իբր յատուկ անուն, այլ  
անձնական դերանուն յիմնադրութեամբ:  
Պայծառ է այժմ Արարատ անունը, կը մնայ  
տակաւին նկատել վերջին երկու անունները:

Որովհետեւ Պեչիտտան եւ Թարգում  
Միննի Հայաստան թարգմանած են, շատ մը  
մեկնիչներ չտատամեցան այս երկու անուն-  
ներն իրարու հետ աղերսի մէջ զնելու: Նոյն  
խակ Armenia անունն մէջ փորձեցին Միննի  
կամ Ման անունն իբր ստուգարանական  
բաղկացուցիչ մաս մը դռնել: Մինչ Streck<sup>3</sup>  
«պարզապէս» իբր «ստուգարանական խաղ  
մը» կ'որակէ Բոխարտի մեկնութիւնն, որուն  
համաձայն Armeniaին կը տրուի սեմական

ծաղում իբր Har-minia, այսինքն Միննիի  
լեռնաշխարհ, Մուրատ<sup>4</sup> այս շատ հաւանա-  
կան կը յայտարարէ: Թէեւ նա այս ստուգա-  
րանութեան իբր հիմ չի նկատեր արամերէն  
*har* բառն, այլ բակար. *hara* (կամ *haraiti*),  
նմանապէս լեռ նշանակութեամբ եւ զոր կը  
գտնէ — յենլով Spiegelի յառաջբերութեանց  
վրայ — բաղմաթիւ անուններուն մէջ, ինչ-  
պէս *Ar-bela, Ar-burdsch* եւն: Ուստի *Ar-  
minia* կամ *Arminiya* իբր բարդութիւն մը  
Հար-Միննի կրկին բառերուն սկզբնաբար  
նշանակած ըլլալու է Միննիցիներու լեռնաշ-  
խարհ: Այս անուանակոչումը «կը տրուէր  
նախնարար միայն մարական-հայկական սահ-  
մանալեռներուն մէջ հաստատուած Միննի-  
Մանցիներուն — շատ հաւանական է թէ այն  
ցեղերէն մին, որոնց հետ հայ ժողովուրդը  
խանութեցաւ — կամ այն լեռնային երկիրնե-  
րուն, ուր ասոնք կը բնակէին եւ միայն յե-  
տոյ կամաց կամաց այս սահմանալեռներուն  
ետերը գտնուող Հայաստանի լեռնազաւառ-  
ներուն փոխանցուելով այս անուանակոչումը  
Մարերու կողմանէ՝ ընդհանրացաւ»<sup>5</sup>:

Քանի մը մեկնիչներ այս նոյնացումնե-  
րուն մէջ դեռ շատ յառաջ դացած են: Ասոնք  
նկատելով Ման եւ Վան անուններուն նմա-  
նութիւնը հին Մանը Վանայ աշխարհին մէջ  
կը փնտռէին<sup>6</sup>: Ուստի զարմանալի չէ որ  
Բոխարտէն ի վեր բաղմաթիւ գիտնական-  
ներ<sup>7</sup> Միննին նիկողայոս Դամասկացոյն<sup>8</sup>  
*Minyas*ի հետ համեմատած, նոյն իսկ նոյնա-  
ցուցած են: Թէ է այս նոյնացումն անտեղի  
է, կը ցուցնէ արդէն Եօթանասնից թարգ-  
մանութիւնը: Երբ Գ. դարուն Ն. Ք. Միննիին

<sup>1</sup> Տես այս մասին վերը՝ Գլուխ Ա., ծնթ. 4:  
<sup>2</sup> Տես վերը՝ Գլ. Ա., ծնթ. 3:  
<sup>3</sup> ZA 14 (1899), էջ 145 = հայ. թրգմ.,  
էջ 104 յղ.:

<sup>4</sup> Fr. Murad, Ararat und Masis, 18:  
<sup>5</sup> Murad, *անդ*, էջ 18—19:  
<sup>6</sup> Տես այս անուանական քանի մը պաշտպաններ առ  
S. Weber, Ararat in der Bibel, Tüb. ThQSch, 83  
(1901), էջ 336 յղ. = հայ. թրգմ., էջ 22:  
<sup>7</sup> Belck, VBAG 1894, 480. Murad, *անդ*, էջ 47  
յղբ.: S. Weber, *անդ*, էջ 335 = հայ. թրգմ., էջ 20  
յղբ.: C. Orelli, Der Prophet Jeremia<sup>3</sup>, v. LI, 27 էւն:  
<sup>8</sup> Flav. Jos., Antiq. I, III, 6. Euseb. Praepar.  
evang., IX, II.

յիշատակն այն աստիճան անհետ կորստած էր որ Եօթանասնից Թարգմանիչներն իսկ չեն կրցած հասկնալ, ի՞նչպէս կարելի է այսպիսի կենդանի յիշատակ ենթադրել երկու դար յետոյ ապրող մատենադրի մը եւ մանաւանդ անոր ընթերցողներուն քով, որ կարենար այս Զ. դարէն (ն. Բ.) ի վեր անհետացած ժողովրդեան մը երկրին անուան վրայէն բոլորովին անյայտ լերան մը դիրքը որոշել: Այս պատճառաւ Արմինիա անուան յառաջընթացը Հարմինիայէն կը մնայ միշտ խնդրական եւ նոյն իսկ երբ Ասորիներն ու Թարգում Միննին Հայաստան կը թարգմանեն, ասիկա պատմական վկայութիւն մը չէ, այլ լուի փորձ մը Միննին մեկնելու, որ այնչափ արժէք ունի, որչափ տակաւին քննուելիք փաստերն, որոնց վրայ հիմնուած է<sup>9</sup>: Գէթ որոշ արգելք մը ձեռք բերելու համար դարձեալ բեւեռադրերուն պէտք ենք դիմել, որովհետեւ Հին Կտակարանը վերայիշեալ տեղիքին մէջ յիշատակուած անունէն զատ այս մասին ոչինչ կ'աւանդէ:

§ 2. ՄԻՆՆԻ ԲԵՆԵՌՈՒԳՐԵՐՈՒՆ ՄԵՋ

Ս. Գրքի Միննին կը համապատասխանէ ասորեստ. բեւեռադրերուն Մաննայի<sup>10</sup> եւ խարբի արձանագրութեանց Մանա<sup>11</sup>: Այս Մաննայի-Ման, ինչպէս առանձնապէս Սէյս շեշտած է, պէտք է զանազանել Վան-Բիայնայէն<sup>12</sup>: Ո՛ր կը բնակէին այս Մաննացիները: Ասորեստ. բեւեռադրերուն համաձայն այս երկիրը կը գտնուէր Ասորեստանի հիւսիսային կողմը՝ ոչ հեռու մէկ կողմանէ Ուրարտուէն եւ միւս կողմանէ Մարաստանէն: Բեւեռ<sup>13</sup> Մաննացիներուն աշ-

<sup>9</sup> S. Weber, Tib. ThQSch 1901, էջ 340 = Հայ. թրգմ., էջ 27 յջ.: Արմինիա, Արմանիա = Արման, տ. 2. Թ. Տաշեան, Հաթեր եւ Ուրարտանք, էջ 343:  
<sup>10</sup> Ասորեստ. տեղեկութիւններ Մաննայի կամ Մանի մասին կը յիշատակեն Streck, ZA 14 (1899), 134 յջ. = Հայ. թրգմ., էջ 93 յջ. եւ Thureau-Dangin, La huit. Camp. de Sargon, էջ II-V. Համաստեան. Streck, Assurbanipal, Bd. I, S. CLXXXIV, ծնթ. 1: Ասորհոգոյնի շրջանին համար տ. մասնաւորապէս Klauber, PRT (= Politisch-relig. Texte der Sargonidenzeit), 1913, էջ LVII-LIX:  
<sup>11</sup> Տես ասոր մասին տեղիքներ առ Sayce, JRAS, XIV:

<sup>12</sup> Sayce, անդ, Մասն 3, 4. Schrader, Zur Geogr. d. assyr. Reiches, էջ 330. Belck, VBAG, 1894, էջ 480. Streck, ZA 14 (1899), էջ 145 = Հայ. թրգմ., էջ 104 յջ.:  
<sup>13</sup> Wald. Belck, Das Reich der Mannäer, VBAG 1894, էջ 480 յջ., այս կարծիքին կը հետեւի նաեւ Friedr. Nötscher, Das Buch Jeremias, 1934, էջ 346 յջ.:

խարհը կը փնտռէ Ուրմիոյ լճին հարաւային, հարաւ-արեւելեան եւ հարաւ-արեւմտեան կողմերը: Անոր զլխաւոր աղագոյցն է Թաշ-Թէփէի (Ուրմիոյ լճին հարաւակողմը) արձանագրութիւնն, որ կը պատմէ Ուրարտաց-ուց Մենուաս թագաւորին կատարած արշաւը Մաննացիներուն դէմ եւ անոր նուաճած երկրին մէջ՝ համանուն ժայռին վրայ սլաւաթի մը շինութիւնը: Ասիկէ կ'ուզէ Բեւեռ կարկացնել՝ թէ այս աշխարհակալ թագաւորը պալատը ուղղակի Մաննայի-պետութեան սահմանաբերանը շինած պիտի չըլլայ, այլ աւելի բաւականաչափ ներսերը կամ կենդրոնը:

Սակայն հարց կ'ելլէ՝ թէ արդեօք Մաննացիները միշտ այս տեղ կը բնակէին եւ եթէ ոչ, ե՞րբ եւ ո՞ր տեղէն այս կողմերը մտած են: Բայց որովհետեւ մէկ կողմանէ Ասորեստանի սահմանակ եւ Սաղմանասարի կառավարութեան (860—825) սկիզբները այն երկիրն, ուր վերջէն Մաննացիներուն կը պատահինք, ուրիշ անուններ կը կրէ, եւ մասնաւորապէս Ուրմիոյ լճին հարաւային եւ հարաւ-արեւմտեան եղրամասերը իբր Կիր-րուրի եւ Զամուա նշանակուած կը դրոշմենք<sup>14</sup>, իսկ միւս կողմանէ յետագային այս կողմերը Մաննացիներն երեւան կու գան եւ այն իբր չափազանց ճաղկոյց, պատերազմային ժողովուրդ մը, որուն կատարեալ նուաճումն ոչ մէկ ասորեստ. թագաւորին յաջողած ըլլալ կը թուի, ասիկէ կը հետեւի թէ Մաննացիներն այս կողմերուն նախնի բնիկները չեն, այլ յարաբերաբար ուշ ժամանակաշրջանին խուժող աշխարհակալներ:

Թէ երբ մերձաւորապէս այս ներդադրել տեղի ունեցած է, կարելի է միայն կուսահար որոշել Սաղմանասարի տարեգրութիւններէն, որ առաջին անգամ կը յիշատակէ Մաննացիներն եւ այն իւր կառավարութեան 30րդ տարւոյն՝ 830ի (ն. Բ.) պատերազմական տեղեկագրութեան մէջ: Սոյն տարին կ'աւարտէ Գայիան-Ասոր՝ իւր տուրտանը (սպարապետը) հիւսիս-արեւելեան պետութեանց դէմ, որ Զար անցնելէն ետքը Խուրուսկիա կը կորէ եւ ապա Իգիբուրի՝ Մանի Ուղակի անունով թագաւորին մայրաքաղաքին դէմ կը քալէ: Այս արշաւանքը կ'աւարտի Պարսուայի նուաճումով, որ Բեւեռին համաձայն Ուրմիոյ լճին արեւելեան կամ աւելի ճիշդ հարաւ-արեւելեան կողմերը փնտռելու ենք:



Հետեւաբար Մանի Ուղակիի պետութիւնը կը ղեկեղէ Խուրուսկիայի եւ Պարսուայի միջեւ: Եւ այս աշխարհամասերը կը համարի այն երկիրներն, ուր կը գտնուէին Կիրրուրի եւ Զամուա, որոնք ասորեստ. թագաւորներուն միշտ նորանոր մտահոգութիւն կը պատճառէին եւ միայն ասորեստ. բանակներուն սաստակութիւնն էր որ ղերենք կը ստիպէր հարկատուութեան ղեկանելու: Ուստի մինչեւ Թ. դարու կէսերն Ասորեստացիներուն դէպի հիւսիս-արեւելք ուղղուած ամէն արշաւանքներուն ժամանակ այս պետութիւններն ու ասոնց իշխանները պարտուող եւ հարկատու թշնամիներու կարգին մէջ կը գտնենք, եւ երբ սակայն կու գայ ժամանակ մը, երբ ասորեստ. պատերազմական տեղեկագրիներն այլ եւս Զամուա եւ Կիրրուրի չեն յիշեր, այս երեւոյթը կարելի է միայն անով մեկնել, որ անոնք այլ եւս հոս գոյութիւն չունէին, անոնք անբեւեռացած էին եւ ասոնց տեղը Մաննացիներու մեծ պետութիւնն անցած էր: Ասորեստ. պատերազմական տեղեկագրութեանց մէջ Զամուա վերջին անգամ կը յիշատակուի Սաղմանասարէն՝ իւր կառավարութեան 4րդ տարւոյն (856 ն. Բ.) արշաւանքի ժամանակ, ասոր հակառակ Կիրրուրի 857ին, նոյն թագաւորին կառավարութեան 3րդ տարւոյն արշաւանքի ժամանակ: Հետեւաբար Մաննացիներու ներգաղթը պէտք է 856—830 ն. Բ. տեղի ունեցած ըլլայ:

Ուսկի՞ց եկան Մաննացիները: Բեւեռ<sup>15</sup> կը կարծէ թէ այս ներգաղթի շարժումն սկսած ըլլայ Ուրմիոյ լճին հարաւային ափին արեւելակողմէն, որովհետեւ եթէ Երասխի կողմերէն եւ Ուրմիոյ լճին հիւսիսային ափին երկարութեամբ կատարուած ըլլար, հարկ էր որ նախ Կիրրուրի պետութիւնն ջնջուէր, որուն գոյութիւնը սակայն դեռ Սաղմանասարի ժամանակ կը վկայուի: Բեւեռ այս եզրակացութիւնն ամէն առարկութենէ ազատ չի համարիր Շարէք<sup>16</sup>, որուն համաձայն «հակառակն ալ կարելի է», ուստի չի դեղեւիր Մաննացիներու գաղթականութիւնն Ուրարտացիներու գաղթին հետ պատճառական աղերսի մէջ դնել: Ասոր տեսութեամբ Ուրմիոյ լճին հիւսիսային եւ արեւելեան կողմերը գտնուող ժողովուրդներու հոսանքը Թ. դարու առաջին կէսին դադար առաւ, սա-

<sup>15</sup> Անդ, էջ 484 յջ.:  
<sup>16</sup> ZA 14 (1899), էջ 144 յջ. = Հայ. թրգմ., էջ 104:

կայն այս հոսանքին սկզբնաւորութիւնը շատ հաւանական է որ Թ. դարուն վերջին տասնեակներէն է, հետեւաբար Կիրրուրի առաջին անգամ արձանագրութեանց մէջ յիշատակուելէն յառաջ: Սակայն Շարէքի այս կարծիքը հիմնուած է այն ենթադրութեան վրայ թէ Ուրարտացիներու նախնի բնակավայրն է Երասխի դաշտը եւ թէ ասորեստ. սեպագրերու մէջ անոնք առաջին անգամ Թ. դարուն երեւան կու գան, որ սխալ է<sup>17</sup>: Մանեան տէրութեան սահմանը կը դժէ Շարէք<sup>18</sup> իբր կենդրոն նկատելով Ուրմիոյ լճին հարաւային եւ հարաւ-արեւելեան մասն, որով կը պարունակէր Ատրպատականէն ալ ինչ ինչ մասեր: Մանեան ժողովուրդ կը բնակէր նաեւ Սուրի նահանգին մէջ, որուն մայրաքաղաքն է Ուշխայեա. Լեման-Հաուպտ հետեւողութեամբ Thureau-Danginի այս Ուշքայեան կը նոյնացնէ Թարիդի հետ: Սարգոն կը պատմէ թէ Ուրարտացիներն իրենց ձիերը գլխաւորաբար այս Սուրի նահանգէն կ'ապսպրէին, որով հին պատմական հիմ կը ստանայ Շարգէնի նկարագրութիւնը թէ Թարիդի հարաւային կողմը կը գտնուին ամէնէն հիւսիսային արօտատեղիները. «Հոն կը ճարակէին նահանգին ամենազեղեցիկ ձիերը, իբր 3000 թուով»<sup>19</sup>:

Այս դժուած սահմանին համաձայն Ման կամ Միննի (Մաննայի) ընդհանրապէս ապագայի Հայաստանի աղագրական եւ մեծ մասով նաեւ քաղաքական սահմաններէն դուրս կ'իյնար: Շարէքի վարկածին համաձայն Վանայ դաւառ մը անձուկ իմաստով Մանին պատկանած է, սակայն ասոր մեծ մասը նմանապէս Հայաստանէն դուրս կ'իյնայ: Հոս Հայաստան ըսելով կը հասկնանք յետագայ Հայաստանն եւ ոչ թէ այն ժամանակուան Ուրարտուն, որուն վեհապետութեան ներքեւ գտնուած է Ման ժամանակ մը: Մանեան տէրութեան պատմութիւնն ունի արհիւնահեղ պատերազմներով լեցուն էջեր: Մինչ Ուրարտու-Արարատ, աշխարհակալութեան տեսչէ մղուած, հիւսիսէն դրացի տէրութեան վրայ կը յարձակի, հարաւէն Ասորեստան մոլեղին կատաղութեամբ ռազմադաշտ կ'իջնայ այս խիզախ թշնամուոյն դէմ, որ յանդգնած էր նիւնուէի բազմաթիւ հարկատու տէրութիւններու ինչ ինչ երկիրներ իրեն կցել:

<sup>17</sup> Տես վերը՝ Գլ. Ա., § 6 եւ 10:  
<sup>18</sup> Streck, Assurbanipal, I, CCCLVII f.  
<sup>19</sup> Տես Lehmann-Haupt, Armenien, II, 1, S. 318:

